ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Նաիրիի համանքապետարանը ստորև ներկայացնում է Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի սգո սրահի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>> ծածկագրով գնման ընթացակարգի** արդյունքում **2025 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված N << ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>>** ծածկագրով պայմանագրում **2026 թվականի հունիսի 30-ին կատարված** փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի բնօրինակից սկանավորված տարբերակը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագիր կատարման ժամկետի երկարացում:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը համաձայնեցին կատարել Պայմանագրի կատարման ժամկետի երկարացում 30 օրացուցային օրով՝ 2026թ. հուլիսի 29-ը:

Փոփոխության հիմնավորում՝ 4 մայիս 2017թ-ի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

<<29>> սեպտեմբեր 2025թ. կնքված N <<*ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13*>>

ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Եղվարդ <<30>> հունիս 2026թ.

Նաիրիի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Ն. Սարգսյանի**, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Մաքս-Վուդ>> ՍՊԸ-ն, <<Արամե>> ՍՊԸ և <<Սեկոնտ>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս (գործընկեր 1) տնօրեն Ս. Արզումանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա** (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով <<29>> սեպտեմբեր 2025 թ. կնքված N*<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>>* գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1. **Երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը 30 օրացուցային օրով՝ 2026թ. հուլիսի 29-ը:**

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ(գործընկեր 1)
Նաիրիի համայնքապետարան ք. Եղվարդ, Երևանյան 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/հ 900112101200 ՀՎՀՀ 03560239 Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան	<<Մաքս –Վուդ>> ՍՊԸ, <<Արամե>>ՍՊԸ և <<Սեկոնետ>> ՍՊԸ կոնսորցիում ք.Երևան, Ռիգայի փ. 126/4 բն. 46 ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ Հ/հ11500281929600 ՀՎՀՀ 08272814 Տնօրեն՝ Ս. Արզումանյան
----------	----------
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ